«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Միաջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում

Առարկա՝ Տարրական դասարաններ (դասվարներ)

Ուսուցիչ՝ **Լիլիթ Գրիգորյան**

Դպրոց՝ Վ. Մայակովսկու անվ. հ 7 դպրոց

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՈՒ ՎԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5

Գլուխ 2.ՄԻՋԱՌԱՐԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

Ներածություն

Աշխատանքը կցանկանանք սկսել լեզվի ուսուցման մեթոդիկայի երախտավորներից պրոֆ. Ա.Տեր-Գրիգորյանի այն մտքով, ըստ որի՝ «լեզվական գիտելիքն այն չափով միայն պետք է տեղ ունենա լեզվի ուսուցման տարրական դասընթացում, որքանով այն հասանելի է երեխայի ըմբռնմանը և որչափով այն նպաստում է խոսքի ուսուցումը գիտակցական հիմքերի վրա դնելուն, զարգացնում է երեխայի տրամաբանական մտածողությունը, նրանց մեջ վերացարկում կատարելու կարողություն է մշակում»[1]:

Ժամանակակից կրթության առաջնային խնդիրներից է ուսուցման պրոցեսում զուգորդված մեթոդների կիրառումը, որը հնարավորություն կտա համալիր գիտելիքի ձեռքբերման: Այսինքն ըստ կրթության զարգացման համաշխարհային միտումների, գիտելիքը համընդհանուր հմտություն է և չի կարող տարանջատված լինել ըստ առարկաների: Ուստի առարկայական կրթությունը չի կարող ազդեցիկ լինել՝ առանց միջառարկայական կապերի ստեղծման ու վերառարկայական ինտեգրման: Վերոնշյալով էլ պայմանավորում է *թեմայի արդիականությունը:*

Հետազոտական աշխատանքի *նպատակն է* ուսումնասիրել «Միջառարկայական կապերի» մեթոդական առավելությունները լեզվի ուսուցման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*.

- Ուսումնասիրել միջառարկայական ինտեգրման մեթոդի առանձնահատկությունները;
- Ներկայացնել միջառարկայական ինտեգրման կիրառման միջազգային փորձը;
- Ուսումնասիրել միջառարկայական ինտեգրացիոն մեթոդների հնարավորությունները հանրակրթական դպրոցում;
- Քննել միջառարկայական ինտեգրման մեթոդի հնարավորությունները երեխայակենտրոն ուսուցման ու վերլուծական հմտությունների զարգացման ասպարեզում;

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 272:

- Դիտարկել հնարավոր բոլոր միջառարկայական կապերը լեզվի ուսուցման ընթացքում իրականացվող նախագծային աշխատանքների միջոցով;

Հետազոտական աշխատանքի մեթոդական հիմքն են հանդիսացել հետևյալ *մեթոդները*.

- Մասնագիտական գրականության ուսումնասիրություն;
- Փորձարարական մեթոդը;
- Հետազոտոտական մեթոդը;
- Համեմատության և վերլուծության մեթոդները:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից ու օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՈՒ ՎԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջառարկայական կապերի հիման վրա իրականացվող դասավանդումը այժմ դրված է միջազգային բակալավրիատի ծրագրի հիմքում և նպատակ ունի դրդել սովորողին ոչ թե կարդալ ու հասկանալ տեսական նյութը, այլ ուսումնասիրել, վերլուծել ու գալ ինքնուրույն եզրահանգումների:

1997 թ.-ին, Միջազգային բակալավրիատի կազմակերպության կողմից իրենց Միջին տարիների ծրագրի (MYP) ներդրումից ընդամենը մեկ տարի անց մեկնարկեց մեկ այլ ուսումնական ծրագիր, որն այս անգամ ուղղված էր 3-12 տարեկան սովորողներին: Ծրագիրը հայտնի է primary years programme անունով: PYP- ի նպատակն է խրախուսել սովորողներին հետաքրքրվել շրջապատող աշխարհով, պատրաստել նրանց լինել մոլորակի քաղաքացի: Ծրագիրն օգնում է սովորողներին մտածել ոչ թե այն մասին, թե ինչ է կատարվում հենց իրենց լսարանի ներսում, այլ դրանից դուրս գտնվող աշխարհում:

IBO.org կայքի համաձայն ՝ PYP- սովորողի պրոֆիլը նախատեսված է «զարգացնելու համար անհատներ, ովքեր գիտակ են, բանիմաց, մտածող, շփվող, սկզբունքային, ազատամիտ, հոգատար, ռիսկի դիմող, հավասարակշռված և ռեֆլեկտիվ»[2]:

2006 թվականին Բահամյան կղզիներում IB Հյուսիսային Ամերիկայի ամենամյա տարածաշրջանային կոնֆերանսի ժամանակ դոկտոր Կրյուն, այն ժամանակ Մայամի-Դեյդի հանրային դպրոցի համակարգող տեսուչը, մեկնաբանեց այն համոզմունքը, որ ուսուցիչները պարտավոր են տարրական դպրոցի աշակերտներին հմտացնել գրագիտության մեջ, որպեսզի նրանք կարողանան զարգացնել ավելի բարձր կարգի, կոնցեպտուալ հիմքերով մտածողություն, ինչն էլ պահանջում է միջառարկայնություն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 12 տարեկան երեխան դեռևս ֆիզիկապես և հոգեպես բավարար չափով պատրաստ չէ երևույթներն անջատ-անջատ ընկալելու: 11-12 տարեկանը դեռ չի «առանձնացել» իր Ես-ի հետ, իրեն դեռ բավականին չի ճանաչում[3]: Ուստի կրթական պրոցեսը մաքսիմալ արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է ուսուցումն իրականացնել երեխայի հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակներից բխող ուսումնական բնագրի վրա տարվող աշխատանքներով:

---

[2] Why offer the PYP?

https://www.ibo.org/programmes/primary-years-programme/why-offer-the-pyp/?fbclid=IwAR1WeJkm5vjP_yHZ2yjQfHwWcuRZZAogaFjBJRz3nbmnmLSuvi-Lwr-9Y_g , հասանելի է:

[3] Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Երևան, 2009:

Միջառարկայական ինտեգրումը որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Միջառարկայական նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով[4]:

Միջառարկայական ինտեգրումը իրնից ներկայացնում է տարբեր ուսումնական առարկաների և ծրագրերի փոխադարձ համաձայնեցման գործընթաց՝ մասնագիտական և ուսումնական գործունեության միասնական, անդադար և ամբողջական զարգացման նպատակով:

Ինչպես նշվում է միջազգային բակալավրիատի ծրագրում «Ուսանողները, որոնք կզգան ու կուսումնասիրեն արտաքին աշխարհից եկող մարտահրավերները, իրենց պարտավորված կզգան արձագանքել այդ մարտահրավերներին, երբ բախվեն դրանց հետ»:

Ֆրեյրը մեզ զգուշացնում է, որ «չեզոք կրթական գործընթաց գոյություն չունի ՝ դա բերում է կամ համաձայնության, կամ մասնակցության աշխարհի փոխակերպմանը»: Եվ համապատասխանաբար, մեզ կոչ է անում «ստեղծել ավելի լավ և խաղաղ աշխարհ»[5]:

Միջառարկայական ինտեգրման էությունը կայանում է նրանում, որ սովորողները մի քանի տարի շարունակ, միաժամանակ տարբեր առարկաների տեսանկյունից հնարավորություն ունեն ուսումնասիրելու նույն թեման՝ ենթաթեմաների միջոցով աստիճանաբար խորացնելով հիմնական գաղափարի շուրջ ունեցած գիտելիքները: Յուրաքանչյուր թեմայի շրջանակում ամեն ուսումնական տարի ձևակերպվում է նվազագույնը մեկ, առավելագույնը երեք ենթաթեմա՝ հարազատ մնալով թեմայի գաղափարախոսությանն ու բովանդակությանը:

Համակարգային գիտելիքների ձևավորման և ինտեգրված դասընթացների զարգացման համար Վ.Ս. Կուկուշինը առանձնացնում է միջառարկայական կապերի հետևյալ տեսակները[6].

---

[4] Полат Е. С., Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е., Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999, с. 36

[5] https://www.ibo.org/ , հասանելի է:

[6] Планирование межпредметных связей, https://studfile.net/preview/2966972/page:3/, հասանելի է:

1. Ուսումնական և միջառարկայական ուղիղ կապեր. Դրանք առաջանում են, եթե մի առարկայի յուրացումը հիմնված է մյուսի իմացության վրա: Ուսումնասիրության ընթացքում որոշվում են յուրաքանչյուր առարկայի գիտելիքների հիմնական միջուկը: Հնարավոր է մշակել թեստային առաջադրանքների փաթեթ յուրաքանչյուր առարկայի համար գիտելիքների վերահսկման համար, ավտոմատացված ուսուցման ծրագրեր՝ ուսանողների հիմնական գիտելիքների բացերը լրացնելու համար, վերահսկման վերջնական առաջադրանքների փաթեթ յուրաքանչյուր առարկայի համար, ուսումնառության ողջ ընթացքը վերահսկելու և գիտելիքների բացերի լրացման մեթոդիկա:

2. Խնդրահարույց հետազոտական և միջառարկայական կապեր. Դրանք առաջանում են, երբ երկու (կամ ավելի) առարկաներ ունեն ընդհանուր ուսումնասիրության առարկա կամ ընդհանուր խնդիրներ, բայց դիտարկվում են ելնելով տարբեր կարգապահական մոտեցումներից, տարբեր ասպեկտներով:

3. Մտավոր միջնորդավորված կապերն առաջանում են, երբ նույն բաղադրիչները, մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ ինտելեկտուալ հմտությունները ձևավորվում են տարբեր ակադեմիական առարկաների միջոցով: Այստեղ կիրառում են վերլուծության մեթոդները, համակարգային մտածողությունը, տարածական երևակայությունը, փոխաբերական-ինտուիտիվ մտածողությունը: Մտավոր միջնորդավորված կապերն առաջանում են ընդհանուր ճարտարագիտության և մասնագիտական առարկաների ուսումնասիրության ժամանակ: Դրանք վերաբերում են ուսուցման ընթացակարգային կողմին, զարգացնում են մասնագիտական և ինտելեկտուալ հմտությունները:

4. Անուղղակի կիրառական կապերը ձևավորվում են, երբ մի գիտության հասկացություններն օգտագործվում են մյուսի ուսումնասիրության ժամանակ: Ինչպես ցույց է տալիս աշխատանքային պրակտիկան, միջառարկայական հաղորդակցություններն իրականացվում են ուսուցիչների կողմից.

- առանձին դասարաններում (էպիզոդիկ) - առաջին մակարդակ;
- դասերի համակարգում (մասնավոր-համակարգային) - երկրորդ մակարդակ;
- Անընդհատ (համակարգային) - երրորդ մակարդակ:

Երրորդ մակարդակը ամենաօպտիմալն ու արդյունավետն է, քանի որ շատ կարևոր է, որ ուսանողները տեսնեն որոշակի համակարգ ուսուցչի աշխատանքում և նրա գործունեության մեջ: Սակայն կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ միջառարկայական կապերի կիրառումը չպետք է ծանրաբեռնում ստեղծի սովորևողների համար, այլ կնպաստի նրանց մոտ բնագիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Գլուխ 2.ՄԻՋԱՌԱՐԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Լեզուն ոչ միայն հաղորդակցման, այլև մտածողության բարձրագույն միջոց է: Լեզվի ուսուցման ընթացքում երեխայի մոտ պետք է ձևավորվեն քննադատական մտածողություն և վերլուծելու հմտություն: Լեզվի ուսումնառությունը ամուր հիմք է ստեղծում այլ առարկաներ ուսումնասիրելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով հաղորդելու համար:

Լեզվի դասերին միջառարկայական կապերը հնարավոր է գործադրել անդրադարձի ու նախորդ տարիներին թեմայի մասին ունեցած գիտելիքների վերհանման միջոցով: Այս առումով հրաշալի հնարավորություն է տալիս ԳՈՒՍ մեթոդը, որի շրջանակներում երեխան հնարավորություն է ստանում ինքնաանդրադարձ կատարել ու փորձել հիշել թեմայի մասին ունեցած նախնական գիտելիքները և փորձառությունը:

Մյուս եղանակը այլ առարկաների շրջանակներում ձեռք բերած հմտությունների ու գիտելիքների բանավոր փոխանցումն է, ինչի շնորհիվ բարելավվում են լեզվական, հաղորդակցական հմտությունները, սեփական ուժերի նկատմամաբ հավատը: Բացի նշվածներից կարելի է կիրառել նաև այդ հմտությունների կիրառում, որը ուսուցման գործընթացը կդարձնի հաճելի ու արդյունավետ:

Եթե ընթացիկ ծրագրային դասանյութն ունի երաժշտության, մաթեմատիկայի, արվեստի և այլ բնագավառների հետ աղերսներ, ապա նյութի դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա:

Տարրական դպրոցի «ռուսաց լեզվի» դասագրքերում ընկերոջն ու ընկերությանը նվիրված դասերի շրջանակներում կարելի է իրականացնել վերլուծություն «Քառաբաժան» աղյուսակի մեթոդով.

Ինչ տեսա	*Ինչ լսեցի*
Ինչ զգացի	*Նոր վերնագիր*

Նյութի մատուցման հաջորդ փուլում կերպարվեստի ուսուցիչը հանձնարարում է տեսածը, լսածն ու զգացածը գույների միջոցով հաձնել թղթին: Այսպես, ինտեգրման մեթոդով

կերպարվեստի հետ միջառարկայական կապ հաստատելով՝ նպաստում ենք սովորողների կողմից գրական նյութի տեսանելի զգայական ընկալմանը. աշակերտը կարդում է, այն վերածում նկարի, ընտրում բնագրից բխող գույներ, ավելացնում ստեղծագործական ինքնուրույն երանգներ, բանավոր խոսքով հիմնավորում նկարն ու բնագիրը:

Նույն ընկերություն թեմային վերաբերող բազմաթիվ երգեր կան թե՛ ռուսաց լեզվում և թե՛ աշխարհի բոլոր լեզուներում: Ուստի թեման կարելի է անցնել միջառարկայական կապ ստեղծելով «Երաժշտություն» առարկայի հետ և դասը ներկայացնել երգելով: Փորձը ցույց է տալիս, որ երաժշտության ազդեցությամբ նյութի յուրացումը անասելի արդյունավետ է դառնում, քանի որ ստեղծվում է զգացմունքային տրամադրվածություն, անկաշկանդ հոգեբանական մթնոլորտ, ուր գործի են դրվում երեխաների զգայարանները:

Տեխնոլոգիա առարկայի շրջանակներում խմբային աշխատանքների միջոցով՝ ծեփ, կոլաժ, ապլիկացիա, խճակար կարելի է պատրաստել, բեմադրությունների համար դեկորացիաներ ստեղծել և բեմականացնել ցանկացած թեմա: Այս եղանակով հղում տալով լեզվի համապատասխան դասին ամրապնդել ձեռք բերված գիտելիքները: Թատրոնի տարբեր տեսակների կիրառմամբ դասանյութի մատուցումը ևս լայն հնարավորություն է աշակերտակենտրոն դաս մատուցել՝ օգտագործելով զգայարաններով սովորեցնելու տեխնիկան:

Ինչպես նշեցինք լեզուն ինքնարտահայտման հզոր գործիք է ու «Մաթեմատիկա» առարկայի հետ կապը հեշտորեն կարելի է ստեղծել հատկանիշ ցույց տվող բառերով մարմինների նկարագրման միջոցով: Նախագծային աշխատանքների ժամանակ լավագույնս կարելի է միջառարկայական կապ ստանալ:

Ստորև կներկայացնենք նախագծային աշխատանքի պլան «ընկերություն» թեմայով:

Աշխատանքի խնդիրներն են.

- Ընդլայնել երեխաների գիտելիքներն ու պատկերացումները բարեկամության, ընկերական հարաբերությունների մասին:
- Երեխաների մեջ ձևավորել կրտսեր դպրոցականի անձի հոգևոր և բարոյական արժեքների դրական համակարգ, հաղորդակցական և գեղագիտական ներուժ:
- Նպաստել երեխաների գիտելիքների համակարգի ընդլայնմանը բարեկամության, ընկերական հարաբերությունների մասին. երեխաների մոտ այնպիսի բարոյական

հատկությունների ձևավորում, ինչպիսիք են ընկերներ ձեռք բերելու, բարեկամությունը փայփայելու, թիմում շփվելու ունակությունը:

- Նպաստել վերլուծելու, եզրակացություններ անելու ունակության զարգացմանը՝ միաժամանակ նպաստելով խոսքի և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:
- Ստեղծել միմյանց նկատմամբ բարեհաճ, հարգալից վերաբերմունքի պայմաններ:
- Ստեղծել պայմաններ աշակերտների ինտելեկտուալ, հաղորդակցական հմտությունների, նրանց ստեղծագործական մտածողության զարգացման, շրջապատող աշխարհի նկատմամբ հուզական և արժեքային վերաբերմունք ձևավորելու համար:

Նախագծային աշխատանքի նպատակները.

- նպաստել դպրոցականների հոգևոր և բարոյական դիրքի ձևավորմանը,
- նպաստել հաղորդակցության մշակույթի հիմքերի ձևավորմանը և միջանձնային հարաբերությունների կառուցմանը.
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործական անհատականության զարգացման համար:

Նախագիծն իրականացվելու է ուսումնական տարվա ընթացքում և ընդգրկելու է 3 ամիս.

Առաջին փուլը (մոտիվացիոն) նպատակադրումն է, նախագծում ընկղմվելը:

Հետազոտական հարցերի ձևակերպումը «Ես և իմ շրջապատի մարդիկ» թեմայի քննարկում «Ես և շրջակա աշխարհը առարկայից».

- ի՞նչ է ընկերությունը,
- ի՞նչ որակներ պետք է ունենալ, որ ընկերներ ունենաս, և որ քեզ ընկեր կոչեն,
- դասարանում ունե՞նք երեխաներ, ովքեր ընկերություն են անում միմյանց հետ:

Երկրորդ փուլ (գործունեության պլանավորում)

Երեխաներին բաժանել չորս խմբերի, որոնցից յուրաքանչյուրն իր ոլորտում կկատարի հետազոտություն, խմբի համար անվան որոշում, խմբում դերերի բաշխում:

1-ին խումբը պետք է հետազոտի

Թեմա՝ Առակներ և ասացվածքներ ընկերության և ընկերների մասին

Նպատակը՝ . Ստեղծել պայմաններ աշակերտների ինտելեկտուալ, հաղորդակցական հմտությունների, նրանց ստեղծագործական մտածողության զարգացման, ընկերության մասին առածների և ասացվածքների որոնման համար.

2-րդ խումբը մաթեմատիկական հետազոտությունների պատասխանատուն է.

Առաջին խմի հետազոտությունների արդյունքում պիտի մաթեմատիկական չափումներ անի ու փորձի գտնել հարցերի պատասխաններ.

- ճի՞շտ է, որ նմանը նմանին է գտնում,
- կա՞ արդյոք ասա ով է ընկերդ, ասեմ, ով ես դու ասացվածքի ֆիզիկական կողմը,
- արտաքին տվյալները՝ քաշ, հասակ, մազերի, աչքերի կամ մաշկի գույն որքանով են իրենց դերն ունենում ընկերների ընտրության հարցում:

3-րդ խումբը պետք է նկարագարդումներ անի ընկերության և ընկերների մասին

Այս խմբի երեխաները պետք է կազմակերպեն, որ դասարանում յուրաքանչյուր երեխա նկարի ընկերության մասին իր պատկերացոները, վերլուծի և բացահայտի բարեկամության խորհրդանիշները, որոնք առավել ճշգրիտ կերպով փոխանցում են բարեկամության հայեցակարգը և օգտագործի այդ խորհրդանիշները:

4-րդ խումբը պետք է ընկերության մասին հիմն-երգ հորինի՝ օգտվելով ընկերների օգնությունից ու խորհուրդներից:

Երրորդ փուլ (գործնական)

Նախորդ փուլում կատարված աշխատանքների ներկայացում:

Չորրորդ փուլ (ամփոփում - գնահատում)

Երեխաները պետք է ներկայացնեն իրենց նյութը, խմբով ինքնավերլուծություն կատարեն, արտահայտեն իրենց վերաբերմունքը ուսումնասիրության արդյունքների, դժվարությունների և դրական կողմերի վերաբերյալ:

- Նախատեսվածի ո՞ր մասն է հատկապես լավ ստացվել, ինչո՞ւ
- Ի՞նչն էր լավ
- Ի՞նչ պետք է օգտագործվի հաջորդիվ: Ինչո՞ւ:
- Ի՞նչը չստացվեց: Ինչո՞ւ:
- Ի՞նչ ես սովորել: Սովորե՞լ եք: Ի՞նչ իրավիճակներում: Ինչպե՞ս:
- Ո՞ւմ ասել «շնորհակալություն»:

Նշենք նաև, որ նախագծային աշխատանքի կատարման առաջին երկու փուլերի ուղղությամբ արդեն իրականացրել ենք որոշակի քայլեր.





Նախագծային աշխատանքի վերջնարդյունքում ակնկալվում է

1. հաղորդակցական և համագործակցային կարողությունների ամրակայում
2. ինքնակազմակերպման հմտությունների և կամային որակների ձևավորում
3. բառապաշարի հարստացում, բանավոր և գրավոր խոսքի զարգացում
4. կարդալու և գրելու կարողությունների զարգացում
5. հոգեկան գործընթացների զարգացում
6. կարեկցանքի, բարության ու փոխօգնության կարևորության գիտակցում
7. արժեհամակարգի ձևավորում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մարդկության պատմության ընթացքում մշակվել են կրթության զանազան տեսություններ և մեթոդներ, որոնց հիմնական նպատակը դրա արդյունավետության բարձրացումն ու բազմակողմանի, լիարժեք անձի ձևավորումն է: Դրանցից մեկն է համարվում միջառարկայական ինտեգրման մեթոդը, որն այսօրվա դրությամբ համարվում է առավել արդյունավետ ու համապարփակ ուսումնական մեթոդներից մեկը: Այն թույլ է տալիս միավորել և համադրել գիտելիքներ տարբեր գիտական ուղղություններից և ուսումնական առարկաներից:

Միջառարկայական ուսուցման մեթոդը ներկայումս ընկած է մի շարք հեղինակավոր միջազգային դպրոցների ու կրթական ծրագրերի հիմքում:

Մեթոդի առավելություններից մեկն այն է, որ այն դուրս է գալիս զուտ առարկայական, գրքային գիտելիքների սահմաններից ու դառնում է ավելի շատ միջավայրաստեղծ գործոն:

Մեթոդի մյուս առավելությունը սովորողի պրոֆիլի ձևավորման գերակայությունն է: Մի շարք հեղինակավոր միջազգային կրթական ծրագրեր նպատակ ունեն առաջին հերթին ձևավորել պրպտող, գիտակ, բանիմաց, մտածող, շփվող, ազատամիտ, հոգատար, ռիսկի դիմող, հավասարակշռված ու սկզբունքային անհատներ: Այս տեսանկյունից կարծում ենք իրատեսական կրթությունը, որը դուրս է զուտ ակադեմիական գիտելիքի սահմանափակումներից, տալիս է բավական լայն հնարավորություններ նախանշած պրոֆիլի ձևավորման գործում:

Լեզուն ոչ միայն զուտ լեզվական գիտելիքի, այլև լեզվամտածողության համար է պատասխանատու: Միջառարկայական կապերով դասավանդումը կարծում ենք հրաշալի հնարավորություն է՝ պետական նոր չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար՝ ընդհուպ սեփական անձի, իրեն շրջապատող մարդկանց ու երևույթների նկատմամբ հարգանքի, համագործակցային, ընկերական հարաբերությունների ձևավորում:

Լեզվի թեմաների հետ սերտ միջառարկայական կապեր կարելի է տեսնել ցանկացած տարիքային խմբում դասավանդվող գրեթե բոլոր առարկաների հետ՝ նկարչություն, երաժշտություն, թատերարվեստ, մաթեմատիկա, գիտություն, պատմություն և այլ:

Լեզվի դասերի միջառարկայական ինտեգրման առանցքում առաջնահերթությունը պիտի տրվի սովորողի սոցիալականացմանն ուղղված առաջադրանքներին, քանի որ այդ կերպ կազմակերպված ուսումնառությամբ յուրաքանչյուր սովորողի յուրացրած գիտելիքները դառնում են անձի ձևավորման և կայացման կարևոր նախապայման: Ուստի

ինտեգրման մեթոդաբանությամբ ուսուցանվող բնագրերը դադարում են զուտ պասիվ ուսումնական նյութ լինելուց, քանի որ դրանք ուսուցչի երևակայական մտածողությունը գործի դնելու, լեզվական կենդանի օրինակներ մտածելու և ուսումնական որոշ առարկաների հետ ինտեգրելու միջոցով լայն հնարավորություն են ընձեռնում յուրաքանչյուր աշակերտի համար արդիական պահանջմունքներից բխող ուսուցում կազմակերպելու:

Ուստի առաջարկում ենք ավելի հաճախ կազմակերպել հատկապես նախագծային ուսումնասիրության մեթոդով իրականացվող միջառարկայական թեմաներ: Վստահ ենք, որ նման եղանակով ստացած գիտելիքը ավելի միջավայրաստեղծ նշանակություն կարող է ունենալ և կնպաստի արագ կողմնորոշվող, ուշադիր, ստեղծագործ անհատների ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Երևան, 2009:

2. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:

3. Полат Е. С. , Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е., Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999.

4. https://www.ibo.org/ , հասանելի է: